

ՄԿՐՏԻՉ ՊԵՇԻԿԱՇԼՅԱՆ, ԵՐԿԵՐԻ լիակատար ժողովածու, բնագիրը հրատարակության պատրաստեց և ծանոթագրեց բանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մանուկյանը, ՀՍՍՀ ԳԱ հրատարակչություն, Երևան, 1987, 564 էջ:

XIX դարի անվանի բանաստեղծ, դրամատուրգ, մանկավարժ և հասարակական գործիչ Մ. Պեշիկթաշլյանը նշանավորեց արևմտահայ պոեզիայի նոր աստիճանը: Ահա ինչու նրա գրական ժառանգությանը նվիրված յուրաքանչյուր նոր գիրք արժանի է խորախոսանքի և ուշադրության: Այդ ակնկալությամբ էլ փորձում ենք ծանոթանալ Մ. Պեշիկթաշլյանի անվան գրականության ինստիտուտի՝ վերջերս հրատարակած Մ. Պեշիկթաշլյանի երկերի գլխավոր լիակատար ժողովածուին, որի բնագիրը պատրաստել է ծանասիրական գիտությունների թեկնածու Ա. Ս. Մանուկյանը: Պատասխանատու խմբագիրն է բանասիրական գիտությունների դոկտոր Պ. Հ. Հակոբյանը: Գիրքը հրատարակության են երաշխավորել բանասիրական գիտությունների դոկտոր Խ. Մ. Գյուլնազարյանը և բանասիրական գիտությունների թեկնածու Ղ. Մ. Կառապետյանը:

Գիրքը հասցեագրվում է «Երեքերգսզ լույն շրջաններին» (այս և հետագա բոլոր ընդգծումները մերն են —Ջ. Մ.), հավաստելով, թե «...սույն հատորը ամփոփում է Պեշիկթաշլյանի գրական ժառանգության ուսումնասիրությանը ցարդ ձեռք բերած արդյունքները և առաջին անգամ ընթերցող հասարակայնությանը ներկայացնում առ այսօր հայտնի ու մտաշնչի երկերի լիակատար ժողովածուն՝ կազմված ժամանակակից քննադատական սկզբունքներով: Տրված է տարբեր թերթվածների ստեղծագործական պատմության ճշգրիտ պատկերը՝ ըստ առկա տարբերակների ու բնագրային տարբերությունների» (էջ 6): Իսկ գրքի վերջում՝ «Համառոտագրություններ» բաժնում նշվում է, որ «Բանաստեղծությունները հրատարակվում են բնագրի ուղղագրությամբ՝ նկատի ունենալով հեղինակի գրաբար և գրաբարախառն աշխարհագրարը, լեզվական յուրահատկությունները, որոնք այնքան նուրբ են ու բազմերանգ, Հին ուղղագրությամբ են և գրաբար նամակները: Բնագրերը պատրաստված են ըստ առաջին հրատարակությունների» (էջ 512):

Եվ այս պատկառազրու հավաստիացումներից հետո, որքան էլ տարօրինակ է, ընթերցողին պայառում է միայն ակներև հիասթափությունը, որովհետև գրքի գրեթե բոլոր էջերում շուրջընդհանուր սփռված են ժամանակագրական, բնագրային, թերականական, ուղղագրական և այլ սխալներ: Թերթում են գիրքը և մտածում, թե ինչն է այս ամենի պատճառը: Անգիտությունը, հանցավոր անտարբերությունը, թե՛ պարզապես հապշտապ գիրք տպագրելու ցավալի մոլուցքը:

Մենք, իհարկե, հեռու ենք այն մտքից, թե լինում են բացարձակ անթերի հրատարակություններ, բայց այս գրքում եղած սխալներն ու անհեթեթությունները պարզապես չափազանց են: Ահա «Միտքն էք զիրար» բանաստեղծությունը: Այն գրքում ներկայացված է երկու անգամ (էջ 40 և 83) արտատպվել է «Կոչնակի» 1913 թ. № 1-ից, Բայց ամենից զավեշտականն այն է, որ նույն աղբյուրից վերցված բանաստեղծությունը տպագրվել է տարբեր ուղղագրությամբ և տարբեր ծանոթագրությամբ (տե՛ս էջ 519 և 529):

Ինքնին հասկանալի է, որ այս կամ այն հեղինակի ստեղծագործությունների ամեն մի նոր ուսումնասիրություն, հաշվի առնելով նախորդ փորձը, պետք է որ հաջորդաբար գիտական և հրատարակչական ավելի բարձր որակ ստանա: Մինչդեռ այս գրքի ծանոթագրությունները՝ Ա. Չոպանյանի կազմած ժողովածուի (Փարիզ, 1904) պարզունակ կրկնությունն են: Ասենք նաև, որ մեր բանասերներից շատերն են դիմել Մ. Պեշիկթաշլյանի կյանքի ու ստեղծագործությունների ուսումնասիրությանը, սակայն, որքան էլ տարօրինակ է, հիշյալ գրքի կազմողը անտեսել է այդ բնագավառում նորագույն ուսումնասիրությունների տվյալները, կանգնելով շատ տխուր փաստի առաջ: Մի՞թե Ա. Մանուկյանն ու մյուսները չգիտեին, որ հայ բանասիրության երախտավոր Արամ Ինճիկյանը 1947 թ. կազմել է ծանոթագրել է Մ. Պեշիկթաշլյանի՝ մեզանում առաջին, երկերի ժողովածուն, գրել՝ 1961 թ. հրատարակված ժողովածուի առաջաբանը և «Հայ նոր գրականության պատմության» «Մ. Պեշիկթաշլյան» գլուխը: Իսկ բանասիրական գիտություն-

ների թևկնածու Վ. Սաֆարյանի «Մկրտիչ Պեշիկթաշլյանը» (1972) բանաստեղծի մասին ցարդ և դաժ աշխատություններից ամենաարժեքավորն է։ Այն բարձր է գնահատվել գրականագիտության կողմից ինչպես մեզանում, այնպես էլ օտարերկրում։ Զմոռանա՞նք նշել, որ գրքով հիացիլ և այն խմբագրել է մեծ բանաստեղծ ու բանասեր Պարույր Սևակը։ Բանասիրական գիտությունների դոկտոր Դ. Գասպարյանը ժամանակին նշելով այդ աշխատության գրականագիտական բարձր մակարդակը, միաժամանակ գրել է. «Բացի գրականագիտական վերլուծությունից, Վ. Սաֆարյանը կատարել է նաև որոշ փաստական ուղղումներ՝ նորահայտ տվյալներով ճշտում է «Կոռնակի» գրության և բեմադրության տարևթվի հարցը և այս կարգի այլ հարցեր»¹։

Արդ տեսնենք, թե այս ամենից անտեղյակ Ա. Մանուկյանն ինչպես է ծանոթագրել «Կոռնակը»։ «Ինքնագիրը չի՝ պաճապանվել, գրության թվականը պարզված չէ՝ Առաջին անգամ տպագրվել է՝ Մ. էջ 149—207, ապա՝ առանձին գրքույկով (Պոլիս, 1910)։ Առաջին բեմադրությունը՝ 1857 թ. (էջ 543)»։

Մինչդեռ գրականագետ Վ. Սաֆարյանը նորահայտ տվյալներով ցրում է Պեշիկթաշլյանի հասին և դաժ հնօրյա պատկերացումները, գրելով. «Նոր փաստերը հաստատում են, որ թատրոնի ու թատերգության հարցերը գրողին հուզել են դեռևս Բաղրամբեկյան թվականների վերջերի և ոչ թե հիսունական թվականների երկրորդ կեսին, ինչպես կարծվել է մինչև այսօր, և այդ ժամանակ էլ նա ձևերակել է իր անդրանիկ թատերական գործի («Կոռնակի») գրությունը, որի առաջին ազդարարն է «Թատրոն» խորագրով ընդարձակ հոդվածը՝ տպագրված «Արշալույս» Արարատյանի 1850 թ. № 359-ում»²։

Այս է ճշմարիտ իրողությունը։ Եվ եթե ժողովածուն կազմողը նեղություն կրեր կարգալու Վ. Սաֆարյանի գիրքը, ապա կկանխվեր այդ թերությունը։

Ժողովածուն կազմողը պարտավոր էր առաջին հերթին պրպտելու Մ. Պեշիկթաշլյանի կենդանության օրոք լույս տեսած պարբերական մամուլը։ Մինչդեռ այդ բանը չի արվել։ Եթե նա թևկուղ թերթեր Մատենադարանի ու Ե. Զարենցի անվան գրականության և արվեստի թանգարանի արխիվների ցուցակները, այսպես ասած կիմանար, որ Մատենադարանի լազարյանների ֆոնդում պահվում է «Կոռնակի» ձեռագիրը (թղթ. 114, գ. 49)՝ «Կոռնակ և Ներսես» վերտառությամբ։ Հենց այդ ձեռագրի վերջում էլ բերվում է «Երգ» խորագրով այն բանաստեղծությունը, որը «Ողբերգ» վերնագրով տպագրվել է սույն հատորում։ «Երգի» ձեռագրի և տպագրվածի միջև կան բնագրային տարբերություններ։ Զեռագրի վերջում նշվում է. «Շարադրեաց Մ. Պեշիկթաշլյան, աջ. Մուրատեան վարժարանի»։

Ժողովածուի 520-րդ էջում Մ. Պեշիկթաշլյանի «Երգ»-ը մեք մեք բանաստեղծության մասին կարդում ենք. «Ինքնագիրը չի՝ պաճապանվել։ Առաջին անգամ տպագրվել է «Քնար հայկական», 1862, հունիս 31, № 3։ Արտատպվել է բազմաթիվ հայ երգարաններում...»։

Բանաստեղծի կենսագիրները հաղորդում են (ովթե՞ր—Ջ. Մ.), որ մահվանից մի քանի ամիսներ առաջ, 1868 թ. (պետք է լինի 1867 թ.—Ջ. Մ.) մարտի 21-ին նա անդամագրվել է Պոլսի հայ մաստնների «Սեր» օթյակին... և այլն։

Դժվար չէ նկատել, որ այս ամենը ոչ մի կապ չունի ստեղծագործության բուն պատմության հետ։ Մինչդեռ Վ. Սաֆարյանը ստույգ փաստերի հիման վրա ճշգրտել է նաև այս բանաստեղծության գրության թվականը (տե՛ս էջ 203—204)։ Առնվազն 1857 թ.։

Ի դեպ, Վ. Սաֆարյանի այս կարծիքն իր գրքում վկայակոչում է նաև բանասեր Խ. Սամվելյանը³, որի խմբագիրը դարձյալ Պ. Հակոբյանն է։

«Մի քանի գրքեր» և «Երգ»-ը եմք մեք բանաստեղծությունները 1819—20 թթ. լույս տեսած «Հրավեր սիրո» և «Մեք եղբայր եմք» շրջաբերականների լավագույն բանաստեղծական արձագանքներն են, որոնք, կազմողի անտեղյակության պատճառով, դուրս են մնացել գրքի ծանոթագրություններից։

«Մահ. քաջություն» բանաստեղծության երկու տողերն առնված են չակերտների մեջ։

«Նորեկ որդուս կենացն արև

Ձեղի համար փայլի, Հայերն»։

Մանոթագրության մեջ այդ մասին ոչինչ չի ասված։ Ամեն մի աշակերտ դիտի, որ բնագրում չակերտների մեջ առնվում է ուրիշի ուղղակի խոսքը։

¹ «Գարուն», 1974, № 9, էջ 90։

² Վ. Սաֆարյան, Մ. Պեշիկթաշլյան, Երևան, 1972, էջ 129։

³ Տե՛ս Բ ա Ֆ ի, Երկերի ժողովածու, հ. 1, 1983, էջ 522։

«Մահ՝ քաջորդուն» բանաստեղծությունը ծանոթագրելիս, հենվելով սոսկ Ս. Երիցյանի հուշերի վրա, Ա. Մանուկյանը նշում է, թե «բանաստեղծությունը գրված է 1863 թ. ձմռանը, Պոլսում» (էջ 522)։

Առավել տրամաբանական են Վ. Սաֆարյանի դիտարկումները, որը քննարկելով և՛ Ս. Երիցյանի, և՛ Զեյթունցու հուշերը, հանգում է այն հիշյալ եզրակացության, որ բանաստեղծությունը պիտի գրված լինի ոչ ուշ, քան 1862 թ. սեպտեմբեր ամիսը (էջ 240)։

Բանաստեղծությունն անպայման գրվել է 1862 թ. վերջերին։ Այն տպագրվել է Թիֆլիսում լույս տեսած «Օրացույցում»՝ «Մահ՝ Զեյթունցի պատանուին» խորագրով։ «Օրացույցի» վրա կա ցարական գրաքննության պաշտոնական գրառումը. «Дозволено цензурою, 21-го октября, 1863 г.»։

Այդ նույն անփութությամբ է ծանոթագրված նաև «Հանելուկ» բանաստեղծությունը. «Գրություն թվականը պարզված չէ՝։ Առաջին անգամ տպագրվել է՝ «սոյան աղավնի», 1853, № 63, ապա՝ Մ, էջ 42—43, այնուհետև՝ ՔԺ, էջ 53—54։ Արտատպվում է վերջինից։

Սույն քերթվածում այլաբանությամբ ծաղրված է Պոլսի հայ կաթողիկոսների առաջնորդ Անտոն Հասունյանը, որ Վատիկանի թեմապետի արշավատեղի է պատկերվել իր հետի միասնությունը և ղրկել նրան ազգային ինքնությունությունից։ Հանելուկի պատասխանն է՝ Անտոն Հասունյան (էջ 533)։

Անմիջապես երևում է, որ ընթերցողը բավարարվել է միայն Չոպանյանի հրատարակած ժողովածուով և նկողություն չի կրել նայելու «սոյան աղավնին»։ Նայելու դեպքում կնկատել, որ բանաստեղծությունը արտատպություն է «Արշալույս Արարատյանից», 1853, № 441, մայիս 8, իսկ «սոյան աղավնու» № 63-ը թվագրված է 1853 թ., 23 մայիս։ Կատերի նաև «Հանելուկի» լուծումն ու կտեղագրեր գրքում, որը կլինի իսկական բանաստեղծություն ու կհարստացնի ժողովածուն։ Վերջապես, ինչու՞ այս և մի շարք այլ ընթերցողի համար հիմք են ծառայել հեղինակի հետմահու, այլ ոչ թե կենդանության օրոք տպագրված գործերը։ Չէ՞ որ ուրիշ գրադատական պարտադիր և վաղուց ընդունված սկզբունք է։

Եթե Ա. Մանուկյանը կարդար Վ. Սաֆարյանի գրքի 191-րդ էջը, ուր, հեղինակը վկայակոչելով նախորդ բանաստեղծություններին, ասում է, որ «Երգ հայրենի» բանաստեղծությամբ Մ. Պեշիկ-Պաշլյանը յուրովի արձագանքում է «Հայոց աշխարհիկին», ուստի նրա դարձը դեպի Հայաստան է ընդհանրապես և ոչ թե դեպի մի գավառ (Կիլիկիա), ինչպես Ռուսիայի մոտ կամ Ֆրանսիական բնագրում («Եմ նորմանդիա»), փաստերն անձամբ ստուգելու փոխարեն չէր կիրառի տնայնագործական իր սկզբունքը (տե՛ս էջ 539)։

Մեկ այլ հշտում և՛ Ա. Մանուկյանը գրում է, թե «Մուրատ-Ռափայելյան ընկերությունը հիմնադրվել է մոտավորապես 1850-ական թթ. երկրորդ կեսին՝ համանուն վարժարանի նախկին աշակերտների գործակցությամբ. ընկերության նպատակն էր՝ տարեկան հավաքույթների միջոցով Մուրատ-Ռափայելյան վարժարանի երեմանի սաների ու նորեկների միջև ստեղծել կենդանի կապ, համախմբում։ Կազմակերպված հավաքույթներին մասնակցում էին և լուսավորչական հայեր, ինչպես Գ. Օտյանը, Տ. Յուսուֆյանը և ուրիշներ։ Ընկերությունը գոյությունը պահպանեց մինչև 1866 թ.» (էջ 548)։ Այս հնացած տեղեկությունները քաղված են Ա. Չոպանյանի կազմած ժողովածուից (Փարիզ, 1904), առանց, սակայն, անունն ու տեղը հիշատակելու Միայն թե Չոպանյանը նշում է, որ հավաքույթները տեղի են մինչև 1868 թ., իսկ այստեղ չդիտես ինչու, դարձել է 1866։ Չոպանյանի ծանոթագրության վերջին մասը, ուր որոշակի ասվում է, թե այդ ընկերության հավաքույթները տեղի են ունեցել Մ. Պեշիկ-Պաշլյանի մահից հետո էլ (որով լիովին ապացուցվում է Վ. Սաֆարյանի տեսակետը), կազմողը չի արտագրել⁴։

Իրականում (Սաֆարյանի տվյալներով), Մուրատ-Ռափայելյան ընկերությունը հիմնադրվել է ոչ թե «մոտավորապես 1850-ական թթ. երկրորդ կեսին», այլ հենց 1858 թ. վերջին, «անդրանիկ հավաքը տեղի է ունենում 1859 թ. հունվարի 7-ին», «Ընկերության ոգին ու գլխավոր դեմքը եղել է Պեշիկ-Պաշլյանը», ընկերությունն էլ դադարել է գործել ոչ թե 1866-ին, այլ 1871-ին (տե՛ս էջ 90—91)։

Մ. Պեշիկ-Պաշլյանն ունի ինքնուրույն, թարգմանական բանաստեղծություններ և նմանություններ Ա. Չոպանյանը (ինչպես նաև ուրիշները) «Թերթվածներն ու հառերը» կազմելիս հենց այդպես էլ դասավորել է՝ «Հայ քաջորդի», «Մահ՝ քաջորդուն», «Թաղումն քաջորդուն», «Հայ քաջահին»

⁴ Տե՛ս Մ. Պեշիկ-Պաշլյան, Քերթվածներ ու հառեր, ծանոթագրությունը և հրատարակությունը Ա. Չոպանյանի, Փարիզ, 1904, էջ 176։

և այլն: Ժողովածուն կազմողը խախտել է այդ սկզբունքը ևս և տպագրել ինքնուրույն բանաստեղծությունների շարքում «Ջևրթունի երգեր» ընդհանուր խորագրի տակ:

Միայն 1 մեկնաբանվել նաև հետևյալ հիաստոր: Մ. Պեշկեթյանը «Մխիթարեան աշակերտաց առ Միքայել Շէքեան» բանաստեղծության մեջ ծագրելով վանականին, բառախաղ է կատարում ու շատ դիպուկ ասում է՝ «Շէքեան, որովհետև ավանակին թուրքերեն ասում են էշեք և ոչ թե՛ շէք, ինչպես հորձում է հավաստիացնել ծանոթագրողը (տե՛ս էջ 519):

Ասենք նաև, որ 1852 թ. փետրվարի 25-ին Պեշկեթյանը խոսք է ասել Ա. Բագրատունու «Հայկ դուցազն» պոեմի մասին. «Սակաւ ինչ բանք զդիցազներգութենէ Հայկայ յետ առաջին ընթերցման»: 1904 թ. «Բագմավկայում» (էջ 41—42) հրապարակվել է այդ խոսքը խմբագրության համապատասխան ծանոթագրությամբ. որը, սակայն, դուրս է մնացել հիշյալ հատորից:

«Անհայտ անծնավորության» (3) և «Դեռորդ Զարդարյանին» (15) հասցեագրված նամակների ծանոթագրություններում ասվում է. «Տպագրվում է առաջին անգամ»։ Մինչդեռ այդ նամակները տպագրվել են 1933 թ.⁵:

Մեկ այլ դիտողություն. էջ 30, տող 1, ծանոթագրված է. «Աստուծան փող-Հռոմեացի բանաստեղծ Դևցիմ Ավսոնին է վերաբերում ակնարկը»։ Մինչդեռ Ավսոնյան (Աստուծան) Իտալիայի հին անվանումներից մեկն է. Այդ է ասում նաև բանաստեղծության տրամաբանությունը: Այսինքն, իտալական բնարք հայացքի:

Հասուրում խախտված է նաև բանաստեղծությունների ժամանակագրական հաջորդականությունը: Բազում օրինակներից մերենք միայն երկուսը:

<Երևցաւ նա ինձ...> Բանաստեղծության ծանոթագրության մեջ (տե՛ս էջ 528) բերված է Հ. Ասատուրի վկայությունն այն մասին, թե «Հետևյալ անտիպ հատվածը Պեշկեթյանի ամենեն հոգեի գրությունն է, մահվան առաջին (բնագրում՝ առաջին—Ջ. Մ.) օրը գրված, անկողնին մեջ...»:

Նույնն է նաև «Մերձ ի մահ գրուած» բանաստեղծությունը: Այս բոլորից հետո մի՞թե բնագրագիտական մեծ հմտություն էր պետք որոշելու համար այս բանաստեղծությունների տեղը: Սակայն, զարմանալի տրամաբանությամբ, նման գործերը զետեղվել են ոչ թե վերջում, այլ շատ ավելի վաղ գրված բանաստեղծություններից առաջ:

Իսկ ի՞նչ ասել բնագրային աղավաղումների և ավերածությունների մասին: Դրանք այնքան շատ են և տարաբնույթ, որ կարող են մի առանձին հոդվածի նյութ դառնալ: Այդ հարցերովոր սխալներից նշենք մի քանիսը միայն: Այսպես, աուրբող, տպագրվել է՝ աուրբ (էջ 11), կարժկր-կարևեր (18), խրոխտայր-խրոխտար (23), Սրտահառաչ-Արտահառաչ (33), գգուիմ-զզուիմ (60), սուդ-սիւդ (68), Սիւք-սիւզ (30), մարգը-մարզը (70), երևցաւ-երևցաւ (76), փայլփուռ-փայլփուռ (91), յիտալական-յիշտալական (140), բանտը-բանակը (164), տիրադավ-տիրագրավ (262), Մակեդոնական-Մամիկոնական (260), հոս աս—հավատս (154), ասանկ-այսպես (155), դամբան-դամբարան (156), հոգածություն-հոգացություն (510), «Դրախտ կորուսյալ»՝ «Կորուստ դրախտին» (549) և այլն և այլն:

Անկերհ է, որ սա ոչ հին ուղղագրությունն է, ոչ էլ՝ նոր, այլ կատարյալ խառնաշփոթ: Հաճախ ոչ միայն տարբեր, այլ հենց նույն էջում հանդիպում ենք գրության դուգահեռ ձևերի. բաղդ-բախտ (էջ 150, 152, 153), ինծի-ինծի (151), աս-այս (161), ադ-այդ (365), խաբել-խափել (159), ժողովածուի-ժողովածվի (511, 517) և այլն: Եթե սրանց ավելացնենք, որ շատ բանաստեղծություններում դուրս են մնացել առանձին բառեր, իսկ թատերգություններում և ճառերում՝ նույնիսկ նախադասություններ (էջ 163, 164, 166, 259, 260 և այլն), պաշկերը կատարյալ կլինի: Անհավատալի է, բայց հիաստ, որ սրանից չորս տարի առաջ իր իսկ, Ա. Մանուկյանի հրապարակած նամակներին⁶ և այս գրքում զետեղվածների միջև բնագրային աղավաղող տարբերություններ կան:

Հետևությունն աներկբայելի է: Այո ժողովածուի հրատարակումը ցավալի թյուրիմացություն է, մանավանդ որ՝ գրական այս բացահայտ խոտանը մատուցվել է գիտական մականիշով և 20000 տպաքանակով:

ՋԱՆԻ ՄԻՐՋԱՐԵԿՅԱՆ

յաճասիրական զիտությունների քնննածու:

⁵ Տե՛ս Գ. Զարդարյան, Հիշատակարան, հ. Գ, Կահիրե, 1933, էջ 133—140:

⁶ «Պատմա-բանասիրական հանդես», 1983, № 1:

ՀՍՍՀ ԳԱ խմբագրական-հրատարակչական խորհրդում: 1987 թ. նոյեմբերի 23-ին խորհրդի նիստում քննության առնվեց Մ. Պեշիկթաշլյանի երկերի ժողովածուի հրատարակության հարցը: Նիստում նշվեց, որ ժողովածուն կազմող Ա. Մանուկյանի և խմբագիր Պ. Հակոբյանի ծայրաստիճան անպատասխանատվության հետևանքով միհատորյակը լույս է տեսել բնագրագիտական, ուղղագրական, կետադրական աղաղակող սխալներով և փաստական անճշտություններով: Փաստորեն, առանց անհրաժեշտ լուրջ աշխատանք կատարելու, 20000 տպաքանակով ընթերցողին հրամցվել է բացարձակ խոտան, որ աններելի է: Եվ այդ այն դեպքում, երբ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտը, որպես կանոն, դասականների ժառանգության հրատարակությունը կազմակերպում է պատշաճ մակարդակով:

Գիտական անբարեխղճություն են դրսևորել նաև ժողովածուն գրախոսող գիտաշխատակիցներ Խ. Գյուլնազարյանը և Լ. Կարապետյանը: Ինստիտուտի գիտական խորհուրդը՝ վստահելով կազմողին, խմբագրին և գրախոսողներին, անհրաժեշտ պահանջկոտություն չի ցուցաբերել գիրքը տպագրության երաշխավորելիս: Իր պարտականությունների մեջ խիստ թերացել է նաև ԳԱ հրատարակչության խմբագիր Ա. Շաղգամյանը:

Խմբագրական-հրատարակչական խորհրդի որոշման մեջ առաջարկվում է ԳԱ Աբեղյանի անվան գրականության ինստիտուտի ղեկավարությանը՝ գիտական խորհրդի նիստում քննության առնել Մ. Պեշիկթաշլյանի երկերի ժողովածուի հրատարակության խոտանման իրողությունը և պատասխանատվության ենթարկել մեղավորներին: